

Կ-039-06.03.2019-ՊԻ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-528-Ն քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 314.2-րդ հոդվածում «169.26-րդ հոդվածի» բառերը փոխարինել «169.28-րդ հոդվածի» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 334.1 հոդվածի վերնագիրը և 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 334.1 Ձերբակալված, կալանավորված, ազատազրկման հետ կապված պատժի դատապարտված կամ արգելանքի վերցված և փախուստ կատարած անձին աջակցելը

1. Ձերբակալված, կալանավորված, ազատազրկման հետ կապված պատժի դատապարտված կամ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով արգելանքի վերցված և փախուստ կատարած անձի քննությունից կամ դատից կամ պատժի հետագա կրումից խուսափելուն ցանկացած ձևով աջակցելը, եթե դա նախապես խոստացված չի եղել՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 355-րդ հոդվածի՝

1) վերնագիրը և 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 355. Ձերբակալված, կալանավորված, ազատազրկման հետ կապված պատժի դատապարտված կամ արգելանքի վերցված անձի փախուստը

1. Ձերբակալված, կալանավորված, ազատազրկման հետ կապված պատժի դատապարտված կամ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով արգելանքի վերցված անձի փախուստը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»,

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Փախուստ կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե քրեական վարույթը կարճվել կամ արդարացման դատավճիռ է կայացվել այն գործով, որով անձը դատապարտվել էր ազատազրկման, կալանավորվել, ձերբակալվել կամ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով արգելանքի էր վերցվել»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՆԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

ՀՀ քրեական օրենսգրքում 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-106-Ն օրենքով լրացված 314.2 հոդվածի դիսպոզիցիայում սխալմամբ հղում է կատարվել այլ, քրեական օրենսգրքի հիշյալ դրույքի իրավակարգավորման առարկայի հետ առնչություն չունեցող ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.26 հոդվածին: Օրենսգրքի 314.2 հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում *հայտարարատու պաշտոնատար անձի, ինչպես նաև նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի կողմից* «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված *հայտարարագրերը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.26-րդ հոդվածի 2-րդ կամ 4-րդ մասով սահմանված վարչական տույժի կիրառումից հետք՝ 30 օրվա ընթացքում, դիտավորությամբ չներկայացնելու համար*: Այնինչ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.26 հոդվածը պատասխանատվություն է նախատեսում հասարակական կազմակերպությունների կողմից հաշվետվությունը չիրապարակելու համար, իսկ հայտարարագրերը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով սահմանված ժամկետներում չներկայացնելու համար վարչական պատասխանատվություն նախատեսված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.28 հոդվածում:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև Օրենսգրքի 355-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիան հստակեցնելու, իրավակարգավորման ամբողջականությունն ապահովելու, տարակարծիք մեկնաբանությունները բացառելու և այդպիսով՝ իրավական որոշակիություն ապահովելու և հակասական իրավակիրառ պրակտիկան բացառելու անհրաժեշտությամբ:

Այսպես՝ Օրենսգրքի 355-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը դասվում է արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների շարքին, որի հանրային վտանգավորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրա կատարմամբ խոչընդոտվում է քրեական գործի քննությունը, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռի կատարումը: Բացի այդ, հիշյալ արարքի կատարմամբ փախուստի դիմած անձանց որոնելու և գտնելու համար վատնվում են բավականաչափ միջոցներ, իսկ այդ անձինք էլ, հաճախ չունենալով գոյատևելու օրինական միջոցներ, կարող են նոր հանցանքներ կատարել:

Այսպիսով՝ Օրենսգրքի 355-րդ հոդվածի դիսպոզիցիայում թվարկվում են այն օբյեկտները, որոնցից փախուստի դիմելու դեպքում անձին կմեղսագրվի հանցակազմով նախատեսված արարքի կատարումը: Սակայն, հնարավոր են այնպիսի իրավիճակներ, երբ ձերբակալված, կալանավորված կամ դատապարտված անձը փախուստի դիմի ոչ թե հիշյալ օբյեկտներից, այլ օրինական հիմքերով գտնվելով ազատագրկման, կալանավորվածներին պահելու կամ ձերբակալվածներին պահելու վայրերից դուրս՝ օրինակ՝ քաղաքացիական հիվանդանոցում, դատարանի շենքում, ուղեկցող ավտոմեքենայում և այլն, դիմի փախուստի: Նշված վայրերում ևս անձը գտնվում է հատուկ

հսկողության տակ, քանի որ դատապարտյալի կամ կալանավորված անձի փոխադրումն իրականացվում է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կալանավորվածներին պահելու և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններում:

Հատկանշական է, որ նման պայմաններում անձի իրավական կարգավիճակը չի փոխվում, իսկ փախուստի դիմելով՝ անձը, որպես կանոն, ցանկանում է խուսափել պատժից և պատասխանատվությունից: Այլ կերպ ասած՝ քննարկվող բոլոր դեպքերում, անկախ նրանից, թե անձը փախուստ է կատարել ազատագրվման, կալանավորվածներին կամ ձերբակալվածներին պահելու վայրերից, թե դրանցից դուրս գտնվելու ժամանակ, հանցագործության օբյեկտը չի փոխվում, հանցավոր արարքի արդյունքում խախտվում են այն հասարակական հարաբերությունները, որոնք կոչված են ապահովելու վերջինիս նկատմամբ հարկադրանքի միջոցների կիրառումը:

Համապատասխանաբար անհրաժեշտություն է առաջանում նաև ձերբակալման նպատակով արգելանքի վերցված անձի մասով կարգավորում նախատեսել հոդվածի 3-րդ մասում:

Ընդ որում՝ համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն կա նաև ՀՀ քրեական օրենսգրքի 334¹ հոդվածում, որը վերաբերում է քրեակատարողական հիմնարկից կամ ձերբակալվածներին պահելու վայրից փախուստ կատարած անձին աջակցելուն:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Առաջարկվող կարգավորման նպատակն է ուղղել Օրենսգրքի 314.2 հոդվածում առկա վրիպակը, հստակեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 355-րդ հոդվածի դիսպոզիցիան՝ փախուստի հանրային վտանգավորությունը պայմանավորելով ոչ թե այն օբյեկտների ցանկով, որտեղից փախուստ է դիմում անձը, այլ անձի կարգավիճակով, ով օրենքով սահմանված կարգով պարտավոր է դրսևորել իրավահպատակ վարքագիծ և ենթարկվել ձերբակալվածներին, կալանավորվածներին պահելու վայրերի, ուղղիչ հիմնարկի ներքին կանոնակարգին, ուղեկցող ոստիկանների օրինական պահանջներին, այդ թվում՝ գտնվելով հիշյալ օբյեկտներից դուրս:

Դատական պրակտիկան ևս որոշակիորեն գնացել է այն ուղիով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 355-րդ հոդվածով նախատեսված քրեորեն պատժելի փախուստը պայմանավորվի անձի կարգավիճակով՝ անկախ այն հանգամանքից, թե որտեղից է անձը փաստացի փախուստի դիմել (օրինակ՝ Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի փետրվարի 14-ի ԵԱՆԴ/0077/01/12 գործով դատավճիռը):

Բացի այդ, առաջարկվում է նույնատիպ փոփոխության ենթարկել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 334¹ հոդվածը:

Հատկանշական է, որ ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծը ևս որդեգրել է հիշյալ մոտեցումը և քրեորեն պատժելի համարել ազատագրվման հետ կապված պատժի դատապարտված, ձերբակալված կամ կալանավորված անձի փախուստը՝ անկախ այն հանգամանքից, թե փաստացի որտեղից է անձը դիմել փախուստի:

Քննարկվող հարցի կապակցությամբ միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս վկայում է, որ միայն ազատությունից զրկված անձանց պահելու վայրերից փախուստը քրեորեն պատժելի համարելն անհարկի նեղացնում է հանցակազմի շրջանակները և չի ապահովում քրեաիրավական նորմի պատժիչ և կանխարգելիչ գործառնությունների իրացումը: Այս առումով հատկանշական է

Ռուսաստանի Ղաշնության քրեական օրենսգրքի 313-րդ հոդվածը, որի դիսպոզիցիայի նկարագրության մեջ օբյեկտիվ կողմը չի սահմանափակվում միայն ազատագրված վայրից կամ կալանքից փախուստով, այլ ներառում է փախուստը նաեւ հսկողությունից:

Նույնպիսի մոտեցում է առկա նաև Ուկրաինայի Հանրապետության քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածում, Ղազախստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 426-րդ հոդվածում և այլն:

3. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները եւ անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության կողմից:

4. Աննկալվող արդյունքը

Նախագծի ընդունմամբ կհստակեցվի Օրենսգրքի 314.2, 355-րդ, ինչպես նաև 334¹ հոդվածների դիսպոզիցիան՝ այդպիսով ապահովելով իրավական որոշակիությունը, բացառելով տարակարծիք մեկնաբանությունները, չարաշահումներն ու հակասական իրավակիրառ պրակտիկան՝ նպաստելով արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների ոլորտում պետության քրեական քաղաքականության առավել արդյունավետ իրականացմանը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Քրեական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածներում առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Ընդունված է 2003 թվականի ապրիլի 18-ին

Հոդված 314.2. Հայտարարագրերը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելը

1. Հայտարարատու պաշտոնատար անձի, ինչպես նաև նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հայտարարագրերը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի ~~169.26-րդ~~ 169.28-րդ հոդվածի 2-րդ կամ 4-րդ մասով սահմանված վարչական տույժի կիրառումից հետո՝ 30 օրվա ընթացքում, դիտավորությամբ չներկայացնելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարհինգհարյուրապատիկից երկուհազարապատիկի չափով, կամ ազատագրվածամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

(314.2-րդ հոդվածը լրաց. 09.06.17 ՀՕ-102-Ն)

Հոդված 334¹. Ձերբակալված, կալանավորված, ազատագրվածան հետ կապված պատժի դատապարտված կամ արգելանքի վերցված և փախուստ կատարած անձին աջակցելը ~~Քրեակատարողական հիմնարկից կամ ձերբակալվածներին պահելու վայրից փախուստ կատարած անձին աջակցելը~~

1. Ձերբակալված, կալանավորված, ազատագրվածան հետ կապված պատժի դատապարտված կամ քրեական դատավարության օրենսգրքի հմաստով արգելանքի վերցված և

փախուստ կատարած անձի քննությունից կամ դատից կամ պատժի հետագա կրումից խուսափելուն ցանկացած ձևով աջակցելը, եթե դա նախապես խոստացված չի եղել`

~~1. Ռուղիչ հիմնարկից, կալանավորվածներին պահելու վայրից կամ ձերբակալվածներին պահելու վայրից փախուստ կատարած անձի` քննությունից կամ դատից կամ պատժի հետագա կրումից խուսափելուն ցանկացած ձևով աջակցելը, եթե դա նախապես խոստացված չի եղել, և փախուստն արդեն տեղի է ունեցել`~~

պատժվում է ազատազրկմամբ` առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտված անձի նկատմամբ`

պատժվում է ազատազրկմամբ` երեքից յոթ տարի ժամկետով:

(3341 -ին հոդվածը լրաց. 24.12.04 ՀՕ-67-Ն)

Հոդված 355. Ձերբակալված, կալանավորված, ազատազրկման հետ կապված պատժի դատապարտված կամ արգելանքի վերցված անձի փախուստը Փախուստն ազատազրկման վայրից, կալանավորվածներին պահելու վայրից կամ ձերբակալվածներին պահելու վայրից

1. Ձերբակալված, կալանավորված, ազատազրկման հետ կապված պատժի դատապարտված կամ քրեական դատավարության օրենսգրքի հմաստով արգելանքի վերցված անձի փախուստը`

~~1. Փախուստն ազատազրկման վայրից, կալանավորվածներին պահելու վայրից կամ ձերբակալվածներին պահելու վայրից`~~

պատժվում է ազատազրկմամբ` առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Նույն գործողությունը, որը կատարվել է`

1) մի խումբ անձանց կողմից,

2) այլ անձի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,

3) զենք կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ`

պատժվում է ազատազրկմամբ` առավելագույնը ութ տարի ժամկետով:

3. Փախուստ կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե քրեական վարույթը կարճվել կամ արդարացման դատավճիռ է կայացվել այն գործով, որով անձը դատապարտվել էր ազատազրկման, կալանավորվել, ձերբակալվել կամ քրեական դատավարության օրենսգրքի հմաստով արգելանքի էր վերցվել: Փախուստ կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե քրեական վարույթը կարճվել կամ արդարացման դատավճիռ է կայացվել այն գործով, որով անձը դատապարտվել էր ազատազրկման, կալանավորվել կամ ձերբակալվել էր:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԱԺ ԿՈՂՄԻՑ ԱՐԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-039-06.03.2019-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՐԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	2.	3.	4.	5.	6.
1.	Վլադիմիր Վարդանյան «ՀԻՄ քայլը» խմբակցություն	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	1) Նախագծի 314.2 հոդվածում «169.26-րդ հոդվածի» բառերը փոխարինել «169.28-րդ հոդվածի» բառերով:	Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
2.	Սերգեյ Ատոմյան «ՀԻՄ քայլը» խմբակցություն	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	2) Նախագծի 2-րդ հոդվածով փոփոխվող 334.1 հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Ձերբակալված, կալանավորված, ազատագրկման հետ կապված պատժի դատապարտված կամ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով արգելանքի վերցված և փախուստ կատարած անձի քննությունից կամ դատից կամ պատժի հետագա կրումից խուսափելուն ցանկացած ձևով աջակցելը, եթե դա նախապես խոստացված չի եղել`»: Նույն փոփոխությունը կատարել նաև վերնագրում:	Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է